

Ի ՏԵՐ ՆՆՁՈՒՄՆ

ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶՄԻՒՌՆԻՈՅ.

Պօլսոյ լրագիրք գուժեցին երբեմն Ա. Պօլսոյ Պատրիարք Գ. Եր. Պօղոս սրբազան Երբեպփակոպոսի Ջմիւռնոյ Առաջնորդի Ի Տէր ննջումն:

Ըստ այսմ կգրէ Օրագիրը:

Պատրիարքարան քաշուած հեռագրէ մը կիմանալք թէ նախկին Պատրիարք Պօղոս Սրբազան վախճաներ է իւր խոր ծերութեան հասակին մէջ:

Պօղոս սրբազան երեւելի տաղանդի տէր մէկն էր, մանաւանդ եկեղեցական գործոց խիստ նախանձախնդիր, և իթէ իւր Պատրիարքութենէն անկման օրեր ցաւալի դէպքեր պատահեցան որ Պատրիարք իւր գահէն ովաննայով իջած է, ուստի անցեալին ամենայն անյիշաչարութեամբ կը ցաւէր որ եկեղեցական խնդրոց խիստ նախանձախնդիր Սրբազան մը կորսնցուց ազգը:

Սեդր. 15:

Մասինս ևս հեռեւեալը կգրէ:

Ամենապատիւ Տ. Պօղոս Սրբազան Երբեպփակոպոսի վախճանման լուրն արդէն ծանօթ է մեր ընթերցողաց:

Հոգեկոյս Սրբազանն աշակերտ էր Պրուսայու և Նիկոմիդիոյ այն մեծանուն առաջնորդ Բարագոչեան Պօղոս Սրբազանին որ Արմաշու վանաց հիմնադիրն եղած է: Իւր մանկութեան պատմութիւնը մեզ անծանօթ բայց եկեղեցական կեանքը ծանօթ է, և արդարութեան պարտք մի կը համարիմք խոստովանել թէ իւր սրբակրօն վարդապետին պէս անարատ և անտողեւտ էր ի վարս, հմուտ և նախանձաւոր կարգաց և աւանդութեանց եկեղեցոյ, միով բանիւ կատարեալ Հայ եկեղեցական, որոյ նմանը դժբաղդարբար քիչ կը գտնուի այսօր մեր եկեղեցական դասուն մէջ:

Իւր պատրիարքութեան ժամանակ մանաւանդ վերջերը՝ դժգոհութիւնը ծագեցան իր դէմ, բայց որ պատրիարք կրցած է բամբասանքէ և դժգո-

հուժեռէ ազատ մնալ, կամ մանաւանդ որն ովաննաներով չէ ի գահ հանուած և ետքն ալ ի խաչ հան զգայներով վար չէ առնուած, Պատրիարքութեան փափուկ և ծանր պաշտօնին ճակատագիրն է այս, որում Պօղոս սրբազան ալ ննթակայ եղաւ: Իբրև պատրիարք կրնար իւր նախորդաց պէս մանր և շատ անգամ ակամայ թերութիւններ ունենալ, բայց իբրև եկեղեցական և իբրև եպիսկոպոս՝ իւր աստիճանակիցներուն շատերը կը դերագանցէր իւր հմուտութեամբն և կրօնաւորական բարեմասնութեամբը:

Ուստի կրնամք ցաւելով ըսել թէ Հայաստանայց եկեղեցին ընտիր եկեղեցականէ մի զրկուեցաւ:

Սեդր. 14:

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ.

Ե. յօր (սեպտ. 30) արժանավարելու Հանդիսիւ կատարուեցաւ Ա. Ի. Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Գ. Էորդեայ Գ. ի անուան Տօնախմբութիւնը:

Մաղթանքի ժամանակ Ա ըթանէս Ա յարդապետ և Ջօհրայ Ուրարակիրը ձառեր կարդացին, ինչպէս ի Սեղանատան ևս մի ուղերձ ընթերցաւ Մայր Աթոռոյս ուսումնարանի աշակերտ դպիր Արշակ Պալասանեան:

Յերեկոյն ճրագավառութիւն եղաւ:

Յաջորդ ամսագրոյ մէջ արժան կը համարիմք հրատարակել երեք ձառերը:

Կ Ա Ն Թ Ե Ղ.

Տփլիսեցի Մեծ. Գ. Էորդ Ասայեան Երիտաղմեանց մի մեծ ազակեայ ջահաձև Անթեղ ընծայեց Ս. Տաճարիս Իջմիածնի:

Շնորհակալութիւն կ'այանեմք յիշեալ անձին: